ասէ. «Վստահ եմ յԱստուած, թէ՛ [1]որովհետեւ ծառայեալ[2] եմք սրբոյ[3] Կարապետին միամտութեամբ, թէ՛[4] ոչ թողու[5] զմեզ ի ձեռանէ»: *73* Եւ ել ջահիւք ի վերայ զաւրացն Պարսից[6]:

*74* Եւ[7] յանկարծակի[8] տեսին[9] այր մի գիսաւոր[10], որ լոյս փայլէր ի հերաց նորա[11] եւ զաչս[12] թշնամեացն կուրացուցանէր[13]: *75* Զոր տեսեալ քաջին Սմբատայ՝ ասէր[14] զզաւրսն[15]. «Քաջալերեցարո՛ւք[16] եւ մի՛ երկնչիք[17], զի սուրբ Կարապետն հասեալ է ի թիկունս մեր[18] եւ ընդ մեր ինքն պատերազմի»: *76* Եւ մի՛ ոք անհաւատալի զիրսն[19] կարծիցէ[20], զի ինքեանք[21] սկսան մարտնչել[22] ընդ միմեանս եւ զմիմեանս սատակել[23], զի Տէր[24] պատերազմէր ընդ նոսա: *77* Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչեւ հեղեղատք արեանց[25] ելանէին[26], որ եւ Թիլ կոչեցաւ անուն տեղւոյն[27] այնորիկ[28]:

*78* Եւ[29] իբրեւ վճարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւնն[30], երկու հարիւր[31] այր[32] համարով[33] թողեալ, զի զաւրացն զրոյց տարցեն[34] զառնէն[35], զոր[36] տեսին ի գի-

---

1 *b գրչագրում թերթերի կորստի պատճառով բնագիրը բացակայում է այստեղից մինչեւ Ը գլխի* արս երկու հազար *բառերը (նախ. 91)*
2 *mo* ծառայել
3 *hmo* եմ սուրբ *փխ* եմք սրբոյ
4 *hmo չիք* թէ
5 *hm* թողուլ *փխ* թողու
6 *hmo* ելեալ ի մէջ գիշերի ի վերայ զաւրացն (*h* զաւրաց) Պարսից ջահիւք *փխ* ել ջահիւք … Պարսից *(lsv)*
7 *o չիք* Եւ
8 *hm* յանկարծակի եւ *փխ* Եւ յանկարծակի
9 *o* երեւեալ *փխ* տեսին
10 *ov₄* հերաւոր, *l* հեռաւոր *փխ* գիսաւոր *(hmsv)*
11 *hmo* եւ ի (*h չիք* ի) հերաց (*m* հերացն) նորա լոյս փայլատակէր *փխ* որ լոյս … նորա *(blsv)*
12 *l* զաչն
13 *s* կուրացոյց *փխ* կուրացուցանէր / *o չիք* եւ զաչս … կուրացուցանէր
14 *sv* ասէ
15 *hmo չիք* զզաւրսն
16 *s* քաջալերացարուք / *hmov* քաջալերեցարուք (*o* քաջալերեացարուք) որդեակք
17 *h չիք* եւ մի երկնչիք
18 *hmov* մեզ ի թիկունս հասեալ կայ *փխ* հասեալ է ի թիկունս մեր *(ls)*
19 *h* զիրս
20 *hmo* համարեսցի *փխ* կարծիցէ *(lsv)*
21 *o* ինքեան
22 *sv* մարտնչիլ
23 *lv₄* ինքեանք զիրեարս կոտորէին *փխ* սկսան մարտնչել … սատակել *(1 տող)*
24 *lv₄* Տէր ինքնին
25 *l* արեան
26 *hmo* ելին *փխ* ելանէին *(lsv)*
27 *hmo* տեղոյն
28 *lv₄* որ եւ Թիլ … այնորիկ *(1 տող)*
29 *hmo չիք* Եւ *(sv)*
30 *l* մինչեւ վճարեցին զայնչափ զաւրսն ի կոտորելոյ *փխ* Եւ իբրեւ … բազմութիւնն *(1 տող)*
31 *o* հարոյր / *sv* երկերիւր *փխ* երկու հարիւր
32 *hm* այլ *փխ* այր
33 *hmo չիք* համարով
34 *l* տարցէ, *s* տարցին *փխ* տարցեն *(n)*
35 *hmov* զրոյցատարս (*m* զրոյցարարս) այլոցն վասն առն *փխ* զի զաւրացն … զառնէն *(1 տող) (lns)*
36 *o* որ *փխ* զոր